

Ucom ինտերնետ խանութից գնումներ կատարելու հատուկ դրույթներ և պայմաններ

Մենք ուրախ ենք ողջունել Ձեզ «ՅՈՒԲՈՍ» ՓԲԸ-ի (**ՅՈՒԲՈՍ**) ինտերնետ Խանութում <https://shop.ucom.am> (կայքի հղումը):

Սույն հատուկ դրույթները և պայմանները (**Հատուկ Պայմաններ**) սահմանում են պոտենցիալ կամ առկա բաժանորդի կամ գնորդի (**Հաճախորդ կամ Դուք կամ Ձեր/ Ձեզ**) կողմից հեռակա կարգով ինտերնետ Խանութի միջոցով Ապրանքներ և Ծառայություններ ձեռքբերելու կարգն ու պայմանները: Որոշ Ապրանքների և Ծառայությունների վաճառքի հետ կապված ՅՈՒԲՈՍ-ի կողմից կարող են սահմանվել լրացուցիչ պայմաններ և պահանջներ, այդ թվում՝ վճարունակության հետ կապված պահանջներ, որոնց բավարարման դեպքում միայն հնարավոր է իրականացնել տվյալ Ապրանքի և/կամ Ծառայության վաճառքը:

Սույն Հատուկ Պայմանները հանդիսանում են ՅՈՒԲՈՍ-ի և Ձեր միջև կնքվող բաժանորդային պայմանագրի (այսուհետ՝ **Բաժանորդային Պայմանագիր**) անբաժանելի մասը: Բաժանորդային Պայմանագրի գործողությունը տարածվում է ինտերնետ Խանութի միջոցով առաջարկվող Ապրանքների և Ծառայությունների ձեռքբերման վրա և սույն Հատուկ Պայմանների հետ կարգավորում է ՅՈՒԲՈՍ-ի և Հաճախորդի հարաբերությունները ինտերնետ Խանութից գնումներ կատարելու հետ կապված: Ինտերնետ Խանութ մուտք գործելով, այն ուսումնասիրելով, օգտագործելով և/կամ ինտերնետ Խանութից Ապրանք և/կամ Ծառայություն պատվիրելիս՝ Դուք ընդունում եք, որ ծանոթացել եք սույն Հատուկ Պայմաններին, Բաժանորդային Պայմանագրին և դրա մասը կազմող փաստաթղթերին, այդ թվում՝ ընդհանուր դրույթներին և պայմաններին և ընդունում եք դրանք:

Կողմերից յուրաքանչյուրը մյուսին երաշխավորում է, որ ունի բոլոր իրավունքները, իրավունակությունը և իրավասությունները, որոնք անհրաժեշտ և բավարար են ինտերնետ Խանութի միջոցով Ապրանքներ և Ծառայություններ ձեռք բերելու համար:

Խնդրում ենք ուշադիր կարդալ և ծանոթանալ սույն Հատուկ Պայմաններին և, որևէ պայմանին համաձայն չլինելու դեպքում, հրաժարվել ինտերնետ Խանութից Ապրանք և Ծառայություն գնելուց և այցելել ՅՈՒԲՈՍ-ի ցանկացած սպասարկման սրահ:

Սույն Հատուկ Պայմանների շրջանակում ներքոհիշյալ բառերն ունեն հետևյալ իմաստը, եթե այլ բան չի բխում ենթատեքստից՝

- **Յուկոմ**՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիայի և թույլտվությունների հիման վրա ՀՀ-ում հանրային էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայություններ մատուցող ընկերություն, որը հանդիսանում է «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության իրավահաճառորդ 01.04.2016թ.-ից
- **Հաճախորդ**՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված (ձեռնարկատիրական գործունեության հետ կապ չունեցող) Ապրանքների կամ Ծառայությունների պատվիրման/ձեռքբերման մտադրություն ունեցող կամ Ապրանքների կամ

Ծառայությունների համար Ինտերնետ Խանութում Պատվեր ներկայացրած անձ կամ անձ, ով նշված է Պատվերում որպես Ապրանք կամ Ծառայություն ստացող

- **Ապրանք(ներ)**՝ Ինտերնետ Խանութում առաջարկվող բջջային հեռախոսներ, Վերալիցքավորման քարտեր, նոութբուքեր, նեթբուքեր, համակարգիչներ, Մոդեմներ, օժանդակ պարագաներ, պահեստային մասեր և GSM կամ այլ սարքավորումներ, որոնք նշված են Ինտերնետ Խանութի ընտրացանկում որպես «առկա»
- **Ծառայություն(ներ)**՝ ՅՈՒՔՈՄ-ի կողմից մատուցվող Հանրային էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայություններ (այսուհետ նաև՝ Յուլբոմի Ծառայություն(ներ) կամ Ծառայություն(ներ)), որոնք նշված են Ինտերնետ Խանութի ընտրացանկում որպես «առկա»
- **Մոդեմ**՝ ՅՈՒՔՈՄ-ի կողմից մատուցվող լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվելու համար Ձեզ տրամադրվող սարք
- **Բաժանորդագրման Փաթեթ**՝ փաթեթ, որը տրամադրվում է Ձեզ Ծառայություններից օգտվելու համար և ներառում է համապատասխան Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ՄԻՄ Քարտը, ուղեցույցը և/կամ այլ անհրաժեշտ նյութեր և տեղեկություններ
- **Վերալիցքավորման Քարտ**՝ պաշտպանիչ շերտով ծածկված որոշակի գումարի չափով կանխավճար պարունակող ծածկագիր կրող քարտ, որը օգտագործվում է Ձեր հաշիվը վերալիցքավորելու համար
- **Ինտերնետ Խանութ**՝ <https://eshop.ucom.am/> կայքում տեղադրված վիրտուալ խանութ, որտեղ ցանկացած Հաճախորդ կարող է ծանոթանալ Ինտերնետ Խանութում ներկայացված Ապրանքներին և Ծառայություններին, դրանց նկարագրությանը և գներին, ընտրել կոնկրետ Ապրանք և/կամ Ծառայություն և Պատվեր ձևակերպել՝ սույն Հատուկ Պայմաններով սահմանված կարգով: Ինտերնետ Խանութի ադմինիստրատոր և սեփականատեր է հանդիսանում ՅՈՒՔՈՄ-ը
- **Հեռախոս հատուկ պայմաններով՝ Հետվճարային ամսական բաժանորդագրությամբ**՝ ՅՈՒՔՈՄ-ի առաջարկ, որի շրջանակներում բաժանորդագրվելով հետվճարային ամսական բաժանորդագրությամբ շարժական հեռախոսակապի ծառայություններին՝ որոշակի ժամկետում բաժանորդ մնալու պարտավորությամբ, բաժանորդը հնարավորություն է ստանում ձեռք բերելու բջջային հեռախոս՝ ՅՈՒՔՈՄ-ի կողմից սահմանված հատուկ գնով
- **Պատվեր**՝ հայտ՝ Ինտերնետ Խանութում տեղակայված Ապրանքների և Ծառայությունների ցանկից Հաճախորդի կողմից առանձնացված Ապրանքների և/կամ Ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ, որը ներկայացվում է Ինտերնետ Խանութի միջոցով
- **Հատուկ Առաջարկ**՝ բացառապես Ինտերնետ Խանութում առաջարկվելու համար ՅՈՒՔՈՄ-ի խթանիչ բնույթ ունեցող առաջարկ՝ վաճառվող Ապրանքների և/կամ Ծառայությունների վերաբերյալ տրամադրվող զեղչերի, նվերների կամ վաճառքի այլ հատուկ պայմանների մասին, որոնք որոշվում են ՅՈՒՔՈՄ-ի կողմից իր բացառիկ հայեցողությամբ: ՅՈՒՔՈՄ-ն իրավունք ունի միակողմանի երկարացնել Հատուկ Առաջարկի գործողության ժամկետը առանց այդ մասին Հաճախորդին նախօրոք տեղյակ պահելու:

1. Ընդհանուր դրույթներ

Ինտերնետ Խանութի միջոցով Ապրանքների և/կամ Ծառայությունների առուվաճառքը, և Ինտերնետ Խանութում Ապրանքների ու Ծառայությունների վերաբերյալ սահմանված առաջարկները գործում են բացառապես ՀՀ տարածքում:

ՅՈՒՔՈՄ-ը կարող է հայտարարել Հատուկ Առաջարկներ, որոնք գործում են ՅՈՒՔՈՄ-ի կողմից դրանց համար հայտարարված ժամկետում, կարգով և պայմաններով: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ինտերնետ Խանութում առաջարկվող Հատուկ Առաջարկները կարող են տարբերվել ՅՈՒՔՈՄ-ի սպասարկման սրահներում առաջարկվող այլ առաջարկներից:

2. Ապրանքներ և Ծառայություններ

Ապրանքները և Ծառայությունները, որոնք առաջարկվում են Ինտերնետ Խանութում, որոշվում են ՅՈՒՔՈՄ-ի կողմից իր բացառիկ հայեցողությամբ: ՅՈՒՔՈՄ-ն իրավունք ունի միակողմանի փոփոխել Ինտերնետ Խանութում առաջարկվող Ապրանքների և Ծառայությունների ցանկն առանց նախապես այդ մասին տեղեկացնելու:

ՅՈՒՔՈՄ-ը չի երաշխավորում ցանկում ընդգրկված Ապրանքների կամ Ծառայությունների ցանկացած ժամանակ առկայությունը պահեստում: ՅՈՒՔՈՄ-ը տեղյակ է պահում Հաճախորդին տվյալ տեսակի (որոշակի գույնի, մոդելի կամ տեխնիկական առանձնահատկություններով օժտված) Ապրանքի կամ Ծառայության բացակայության մասին: Նման դեպքերում Հաճախորդի Պատվերը համապատասխանաբար կարող է փոփոխվել, կամ Հաճախորդը կարող է հրաժարվել Պատվերից իր բացառիկ հայեցողությամբ:

ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է սահմանափակել Ձեր կողմից Ինտերնետ Խանութի միջոցով պատվիրվող Ապրանքների և Ծառայություններին քանակը իր բացառիկ հայեցողությամբ:

3. Տեղեկատվություն

Ապրանքները կարող են վիզուալ տարբերվել Ինտերնետ Խանութում և այլ խթանիչ ու գովազդային նյութերում իրենց պատկերից/նկարից: Ինտերնետ Խանութում տեղակայված տեղեկատվությունը հիմնված է Ապրանքների արտադրողների կողմից տրված նկարագրերի վրա, իսկ Ապրանքների նկարները/պատկերները տեղակայված են որպես օրինակ: ՅՈՒՔՈՄ-ն իրեն իրավունք է վերապահում փոփոխություններ կատարել Ապրանքների նկարագրերում և/կամ վիզուալ նկարներում/պատկերներում՝ առանց դրա մասին նախապես տեղեկացնելու: ՅՈՒՔՈՄ-ը պատասխանատվություն չի կրում Ինտերնետ Խանութում տեղադրված Ապրանքների վերաբերյալ տեղեկատվության համար, եթե այն հիմնված է արտադրողի կամ մատակարարի կողմից տրամադրված տեղեկատվության վրա:

Ապրանքների և Ծառայությունների մասին տեղեկատվությունը, որը ներառում է առանց սահմանափակման տեղեկատվություն Ապրանքների և Ծառայության գնի, նկարագրի, մատուցման պայմանների, առաքման պայմանների, ժամկետների և այլնի մասին պարունակվում է Ինտերնետ Խանութում, իսկ Ինտերնետ Խանութում դրա բացակայության դեպքում՝ գնացուցակում, սակագնային պլաններում, առաջարկների նկարագրում, օգտագործողի ուղեցույցներում, Հաճախորդին տրամադրվող երաշխիքային կտրոնում և այլ փաստաթղթերում: Նշված տեղեկությունները և

փաստաթղթերը հասանելի են ՅՈՒՔՈՄ-ի պաշտոնական կայքից, Հաճախորդների սպասարկման կենտրոնից, ՅՈՒՔՈՄ-ի վաճառակետերից, ՋԼՄ-ներից կամ ՅՈՒՔՈՄ-ի կողմից սահմանված այլ միջոցներից:

4. Գներ

Ինտերնետ Խանութում սահմանված գները նշված են ՀՀ դրամով, ներառյալ ԱԱՀ-ն, առանց առաքման արժեքի: Առաքման արժեքը վճարվում է Ձեր կողմից: Առաքման արժեքին կարող եք ծանոթանալ Ձեր կողմից Պատվերը ձևակերպելու ժամանակ: Կախված առաքման վայրից առաքման արժեքը կարող է տարբերվել: ՅՈՒՔՈՄ-ն իրավունք ունի միակողմանի փոփոխել Ինտերնետ Խանութում Ապրանքների և/կամ Ծառայությունների համար սահմանված գները, այդ թվում՝ առաքման արժեքը, առանց դրա մասին Հաճախորդին նախապես տեղեկացնելու: Ձեր կողմից վճարումները կատարվում են Պատվերը ներկայացնելու պահին գործող գներով և սակագներով:

5. Պատվիրման կարգ

Պատվերի ձևակերպումն իրականացվում է Ձեր կողմից անձամբ՝ Ինտերնետ Խանութում սահմանված ցուցումներին համապատասխան:

Պատվերը ձևակերպելու համար Հաճախորդն ընտրում է իրեն հետաքրքրող Ապրանքները և Ծառայությունները Ինտերնետ Խանութում ներկայացված ընտրացանկից՝ սեղմելով կոնկրետ Ապրանքի կամ Ծառայության դիմաց գտնվող «գնել» կոճակը, իսկ այնուհետև՝ «դուրս գրել» կոճակը:

Նույնիսկ եթե առաջին անգամ չեք օգտվում Ինտերնետ Խանութից և ծանոթ եք Ապրանքներին ու Ծառայություններին, խորհուրդ ենք տալիս մինչև գնումը ծանոթանալ պայմաններին, քանի որ ՅՈՒՔՈՄ-ն իրավունք ունի փոփոխություններ կատարել առաջարկներում և պայմաններում՝ առանց դրա մասին նախապես տեղեկացնելու, և Ձեր իմացած պայմանները կարող են փոփոխված լինել: Դուք համաձայն եք ինքնուրույն հետևել սույն Հատուկ Պայմանների փոփոխություններին, և ՅՈՒՔՈՄ-ը պատասխանատվություն չի կրում Ձեզ հայտնի Ապրանքի և Ծառայության պայմանների՝ գնի, առաքման պայմանների և այլնի փոփոխման դեպքում:

Պատվերը ձևակերպելու ժամանակ Դուք, կախված Պատվերի տեսակից, պարտավոր եք ՅՈՒՔՈՄ-ին տրամադրել հետևյալ անձնական տեղեկությունները՝ անուն, ազգանուն, սեռ, գրանցման հասցե, առաքման հասցե, հեռախոս, էլ.փոստ, անձնագրի տվյալներ, ինչպես նաև Պատվերի հետ կապված Ինտերնետ Խանութում պահանջվող այլ տեղեկություններ:

Մինչև Պատվերի հաստատումը Ձեզ ևս մեկ անգամ կխնդրենք հաստատել Բաժանորդային Պայմանագրին, այդ թվում՝ ընդհանուր դրույթներին և պայմաններին և սույն Հատուկ Պայմաններին Ձեր կողմից ծանոթ լինելը և դրանց դրույթները ընդունելը՝ համապատասխան նշում կատարելով պահանջվող պատուհանում:

Դուք իրավունք ունեք հրաժարվել Պատվերից մինչև պատվիրված Ապրանքները և Ծառայությունները Ձեզ հանձնելը՝ ՅՈՒՔՈՄ-ին հատուցելով Պատվերի կատարման և առաքման հետ կապված ՅՈՒՔՈՄ-ի կրած ծախսերը: Սույն կետում սահմանված դեպքերի չարաշահման պարագայում (2 և ավելի անգամ) ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է իր բացառիկ հայեցողությամբ չընդունել Ձեր կողմից հետագայում

ներկայացվող Պատվեր(ներ)ը, հրաժարվել արդեն ներկայացված Պատվերների կատարումից կամ Ձեզ հետ կնքված պայմանագրից:

Եթե Դուք ունեք որևէ հարց կապված Ապրանքների և Ծառայությունների բնութագրի կամ որակական հատկությունների վերաբերյալ, կարող եք դիմել ՅՈՒՔՈՄ-ին՝ պարզելու համար Ձեզ հետաքրքրող հարցերը:

Ձեր կողմից ներկայացված Պատվերների մասով չմարված պարտքեր ունենալու դեպքում, ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է հետաձգել նոր Պատվերի կատարումը, մինչև Ձեր կողմից առկա պարտքի մարումը:

Ինտերնետ Խանութում Ապրանքների և Ծառայությունների պատվիրման կարգը (բացառությամբ Հեռախոս Հատուկ Պայմաններով՝ Հեռվձևային Անսակյան Բաժանորդագրությամբ առաջարկի պատվիրման դեպքի)

Ինտերնետ Խանութում Ապրանքներ և/կամ Ծառայություններ պատվիրելու դեպքում (բացառությամբ Հեռախոս Հատուկ Պայմաններով՝ Հեռվձևային Անսակյան Բաժանորդագրությամբ առաջարկի պատվիրման դեպքի), Պատվերի ձևակերպումն ավարտվում է «հաստատել պատվերը» կոճակը սեղմելով, որով Դուք հաստատում եք Պատվերը, ինչպես նաև սույն Հատուկ Դրույթներն ու Բաժանորդային Պայմանագիրն ամբողջությամբ և առանց վերապահման: Պատվերի ներկայացումից հետո ՅՈՒՔՈՄ-ը հաստատում է Ձեր կողմից ներկայացված Պատվերի գրանցումը՝ համապատասխան նամակ ուղարկելով Ձեր կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ նշելով Ձեր կողմից պատվիրված Ապրանքների և/կամ Ծառայությունների անվանումը, դրանց գինը, առաքման արժեքը, վճարման ենթակա ընդհանուր գումարը և Պատվերին կամ առաքմանը վերաբերող այլ տեղեկություններ: Այս պահից ՅՈՒՔՈՄ-ի հետ պայմանագիրը համարվում է հեռակա կարգով կնքված՝ սույն Հատուկ Պայմաններով և Բաժանորդային Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով: Խնդրում ենք չպատասխանել այդ նամակին, եթե դրանում պարունակվող տեղեկությունները ճիշտ են:

Դուք իրավունք ունեք փոփոխություններ կատարելու Ձեր կողմից կատարված Պատվերում այն հաստատող նամակը ստանալուց հետո ոչ ուշ քան մինչև առաքման վերաբերյալ ՅՈՒՔՈՄ-ի կողմից Հաճախորդին զանգի միջոցով կամ այլ կերպ տեղեկացնելու պահը: Փոփոխությունը կարող է կատարվել համապատասխանաբար պատասխանելով Պատվերի հաստատման վերաբերյալ ստացված նամակին կամ զանգահարելով ՅՈՒՔՈՄ-ի Հաճախորդների սպասարկման կենտրոն և/կամ հաստատելով այդ մասին ՅՈՒՔՈՄ-ի կողմից ուղարկված հաղորդագրությունը: Վերոնշյալ ժամկետում Դուք կարող եք փոփոխել Ձեր կողմից կատարված Պատվերը միայն պակասեցնելով պատվիրված Ապրանքների և/կամ Ծառայությունների քանակը կամ փոփոխություններ կատարել Ձեր կողմից սխալ մուտքագրված անձնական տեղեկությունների մեջ: Պատվերում ներառված Ապրանքների և/կամ Ծառայությունների քանակը ավելացնելու համար Դուք պետք է Ինտերնետ Խանութում նոր Պատվեր ձևակերպեք: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Պատվերի գրանցումը հաստատող նամակի գեներացումը ՅՈՒՔՈՄ-ի կողմից իրականացվում է ավտոմատացված համակարգի միջոցով, և ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է փոփոխություններ կատարել Ձեր կողմից կատարված Պատվերում այն հաստատող նամակը ստանալուց հետո ոչ ուշ, քան մինչև առաքման վերաբերյալ ՅՈՒՔՈՄ-ի կողմից Հաճախորդին զանգի միջոցով կամ այլ կերպ տեղեկացնելու պահը, եթե Պատվերը հաստատելուց հետո դրանում հայտնաբերվել են մաթեմատիկական սխալներ, տեխնիկական վրիպակներ և/կամ անճշտություններ:

Ինտերնետ Խանութում Հեռախոս Հատուկ Պայմաններով՝ Հետվճարային Ամսական Բաժանորդագրությամբ առաջարկի պատվիրման կարգ

Ինտերնետ Խանութում Հեռախոս Հատուկ Պայմաններով՝ Հետվճարային Ամսական Բաժանորդագրությամբ առաջարկի ձեռքբերման դեպքում գործում են վճարունակության ստուգման կանոններ:

Հեռախոս Հատուկ Պայմաններով՝ Հետվճարային Ամսական Բաժանորդագրությամբ առաջարկի ձեռքբերման համար ՅՈՒՔՈՄ-ի կողմից կարող է իրականացվել Ձեր վճարունակության գնահատում, որի շրջանակներում Ձեզնից կարող են պահանջվել ներկայացնել Ձեր վճարունակությունը հիմնավորող տեղեկություններ և փաստաթղթեր, ինչպես նաև երրորդ անձի երաշխավորություն: Վճարունակության պահանջները սահմանվում են ՅՈՒՔՈՄ-ի կողմից: ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է մերժել Ձեզ առաջարկի տրամադրումը, եթե Դուք չեք բավարարում ՅՈՒՔՈՄ-ի կողմից սահմանված վճարունակության պահանջներին:

Ինտերնետ Խանութում Հեռախոս Հատուկ Պայմաններով՝ Հետվճարային Ամսական Բաժանորդագրությամբ առաջարկի պատվիրման դեպքում Պատվերի ձևակերպումն ավարտվում է «հաստատել պատվերը» կոճակը սեղմելով, որից հետո Ձեզ կուղարկվի համապատասխան նամակ՝ Ձեր կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ նշելով Ձեր կողմից պատվիրված հեռախոսի անվանումը, գինը, ընտրված սակագնային պլանը, բաժանորդագրության ժամկետը, առաքման արժեքը, վճարման ենթակա ընդհանուր գումարը և Պատվերին կամ առաքմանը վերաբերող այլ տեղեկություններ: Նամակը պարունակում է նաև տեղեկություն վճարունակության գնահատման ընթացակարգի վերաբերյալ: Խնդրում ենք չպատասխանել այդ նամակին, եթե դրանում պարունակվող տեղեկությունները ձիջտ են:

Նամակը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում Ձեզ հետ կապ կհաստատի ՅՈՒՔՈՄ-ի համապատասխան բաժնի աշխատակիցը՝ սահմանված պայմաններին համաձայն Ձեր վճարունակության գնահատումն իրականացնելու համար: Վճարունակության գնահատման ընթացքում Ձեզնից կարող է պահանջվել shop@ucom.am էլ. փոստի հասցեով ներկայացնել Ձեր վճարունակությունը հիմնավորող տեղեկություններ և փաստաթղթեր՝ համաձայն սահմանված պայմանների, իսկ երաշխավոր ներգրավելու դեպքում նաև երաշխավորին վերաբերող տեղեկություններ և փաստաթղթեր:

Վճարունակության գնահատումն իրականացնելուց հետո Ձեզ կուղարկվի համապատասխան նամակ՝ Ձեր կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին, վճարունակության գնահատման արդյունքների վերաբերյալ՝ նշումով վճարունակության արդյունքների բավարար կամ անբավարար լինելու վերաբերյալ:

Վճարունակության վերաբերյալ սահմանված պահանջներին բավարարելը համարվում է Հեռախոս Հատուկ Պայմաններով՝ Հետվճարային Ամսական Բաժանորդագրությամբ առաջարկին բաժանորդագրվելու պայմանագրի էական պայման: Ձեր վճարունակության գնահատման արդյունքներն անբավարար լինելու դեպքում ՅՈՒՔՈՄ-ի հետ պայմանագիրը համարվում է չկնքված (այսինքն՝ այն Կողմերի համար որևէ պարտավորություն, այդ թվում և ներկայացված Պատվերը ՅՈՒՔՈՄ-ի կողմից կատարելու վերաբերյալ, չի առաջացնում): Այս դեպքում Ձեր Պատվերը համարվում է մերժված:

Վճարունակության արդյունքների բավարար լինելու վերաբերյալ ՅՈՒՔՈՄ-ի նամակը Ձեր կողմից ստանալու պահից ՅՈՒՔՈՄ-ի հետ պայմանագիրը համարվում է հեռակա կարգով կնքված՝ սույն Հատուկ Պայմաններով և Բաժանորդային Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

Այս պահից Ձեր կողմից ներկայացված Պատվերի ցանկացած փոփոխություն կարող է իրականացվել միայն Պատվերից հրաժարվելու և նոր Պատվեր ձևակերպելու միջոցով, որի դեպքում կառաջանա անհրաժեշտություն կրկին անցնել վճարունակության գնահատման ընթացակարգը՝ սույն Հատուկ Դրույթներում սահմանված կարգով:

6. Վճարում

Ապրանքների և Ծառայությունների համար վճարումն իրականացվում է ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ եղանակով:

Անկանխիկ վճարումը կարող էք իրականացնել առցանց:

Այն դեպքում, երբ որպես վճարման միջոց ընտրվել է կանխիկը, Դուք վճարումը կատարում եք անմիջապես առաքողին՝ պատվիրված Ապրանքը և Ծառայությունը Ձեզ հանձնելուց հետո:

Վճարային քարտերի և գործընկեր հանդիսացող բանկերի և վճարային համակարգերի ցանկը սահմանված է Ինտերնետ Խանութում: Սահմանված ցանկը կարող է ժամանակ առ ժամանակ լրացվել կամ փոփոխվել ՅՈՒՔՈՄ-ի կողմից:

Դուք ընդունում եք և համաձայն եք, որ Ձեր կողմից Պատվերը ներկայացնելիս վճարում իրականացնելը չի համարվում առաջարկի ընդունում (ակցեպտ):

7. Առաքում

ՅՈՒՔՈՄ-ն իրականացնում է Պատվերի առաքումը փոստային կամ սուրհանդակային ծառայության միջոցով:

Ապրանքների և Ծառայությունների առաքման ժամկետը Երևան քաղաքի վարչական սահմաններում կազմում է 24 ժամ, իսկ ՀՀ մարզերի դեպքում՝ 72 ժամ, որը հաշվարկվում է Պատվերի հաստատումը, իսկ վճարունակության գնահատում իրականացնելու դեպքում՝ վճարունակության պահանջների բավարարելը հաստատող էլեկտրոնային փոստը Հաճախորդի կողմից ստանալու պահից: ՅՈՒՔՈՄ-ը գործադրում է իր բոլոր ողջամիտ ջանքերը առաքումը սահմանված ժամկետում իրականացնելու համար, սակայն պատասխանատվություն չի կրում իրենից անկախ պատճառներով առաքման ուշացման համար:

Առաքման ժամերն են ամեն օր 10:00 – 19:00: Առաքումն իրականացվում է նաև հանգստյան և տոնական օրերին: Առաքումն իրականացվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում՝ Պատվերում նշված հասցեով:

Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ առաքումը հնարավոր է իրականացնել նաև Ձեր կողմից նախընտրած ՅՈՒՔՈՄ-ի վաճառքի և սպասարկման սրահ: Այս ծառայությունից օգտվելու համար Դուք պետք է Ձեր կողմից ներկայացվող Պատվերում՝ «առաքման հասցե» դաշտում նշեք Ձեր կողմից

Նախընտրելի ՅՈՒՔՈՄ-ի սպասարկման սրահի հասցեն, որտեղ էլ կիրականացվի Պատվերի առաքումը: Նախքան առաքումն իրականացնելը Ձեզ հետ կկապվեն Ձեր կողմից Պատվերում նշված հեռախոսով՝ տեղեկացնելու համար պատվիրված Ապրանքների և Ծառայությունների առաքման փաստի մասին և համաձայնեցնելու համար առաքման ժամը և վայրը, ինչպես նաև ՅՈՒՔՈՄ-ին ներկայացման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Դուք պարտավոր եք սահմանված ժամին և վայրում հասանելի լինել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով՝ պատվիրված Ապրանքը և Ծառայությունն ընդունելու համար, իսկ եթե կոնկրետ առաջարկից օգտվելու համար պահանջվել է նաև այլ անձի երաշխավորություն, ապա Դուք պարտավոր եք ապահովել նաև վերջինիս ներկայությունը՝ վերջինիս կողմից անհրաժեշտ գործողություններն իրականացնելու համար: Պատվիրված Ապրանքը և Ծառայությունը հանձնվում են միայն Ձեզ, բացառությամբ նախապես վճարված Ապրանքների (Ապրանքներ այս դեպքում չեն համարվում Մոդեմները և բջջային հեռախոսները, որոնք ձեռք են բերվել ամսական բաժանորդագրության ծառայության հետ), որոնք կարող են առաքվել Ձեր կողմից որպես ստացող նշված անձին՝ նրա կողմից ստացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը հաստատելու պայմանով:

Պատվիրված Ապրանքը և Ծառայությունը Ձեզ հանձնելու պահին Դուք ստանում եք փաթեթ, որը կախված Պատվերի տեսակից ներառում է ՀԴՄ- կտրոն (եթե վճարումը կատարվում է կանխիկ), Ծառայությունների դեպքում՝ Բաժանորդագրման Փաթեթը և Բաժանորդային Պայմանագիրը՝ ներառյալ դրա հավելվածներն ու փոփոխությունները, լայնաշերտ ինտերնետի Ծառայությունների դեպքում՝ նաև համապատասխան Մոդեմը (եթե պատվիրվել է), Ապրանքի դեպքում՝ Ապրանքը և Ապրանքի շահագործման ձեռնարկն ու երաշխիքային կտրոն (եթե առկա է), վճարունակության գնահատման դեպքում դրա արդյունքներն ամրագրող փաստաթղթերը, իսկ երաշխավորի ներգրավման դեպքում՝ երաշխավորության պայմանագիր, որով երաշխավորը ստանձնում է ՅՈՒՔՈՄ-ի առաջ Ձեր ստանձնած պարտավորության համար համապարտ պատասխանատվություն:

Դուք պարտավոր եք ստորագրել առաքման ժամանակ Ձեզ ներկայացված փաստաթղթերի բոլոր օրինակները, և դրանցից մեկը՝ Ձեր անձը հաստատող փաստաթղթի պատճենի և վճարունակության գնահատման ժամանակ պահանջված այլ փաստաթղթերի հետ միասին հետ ուղարկել ՅՈՒՔՈՄ-ին՝ առաքողի միջոցով: Երաշխավորի ներգրավման դեպքում Դուք պարտավոր եք ապահովել որպես երաշխավոր նշված անձի կողմից երաշխավորության պայմանագրի երկու օրինակի ստորագրումը և դրանցից մեկի՝ երաշխավոր անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենի և վճարունակության գնահատման ժամանակ պահանջված այլ փաստաթղթերի հետ միասին ուղարկումը ՅՈՒՔՈՄ-ին՝ առաքողի միջոցով:

Մույն կետում սահմանված պարտավորությունները համարվում են պայմանագրի էական պայման և սահմանված ժամին և վայրում Ձեր և/կամ երաշխավոր անձի կողմից ներկա չլինելու կամ Ձեր և/կամ երաշխավոր անձի կողմից սահմանված փաստաթղթերը չստորագրելու և/կամ չներկայացնելու դեպքում համարվում է, որ Դուք հրաժարվում եք պատվիրված Ապրանքները և Ծառայություններն ընդունելուց, և ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է հրաժարվել պայմանագրից՝ չհանձնելով Ձեզ առաքումը: Մույն կետում սահմանված դեպքում, բոլոր այն վճարումները, որոնք կատարվել են Ձեր կողմից Պատվերը ձևակերպելու ժամանակ ենթակա են վերադարձման՝ նվազեցնելով Պատվերի կատարման և առաքման հետ կապված ՅՈՒՔՈՄ-ի կրած ծախսերը:

Պատվիրված Ծառայության ակտիվացման ժամկետը կազմում է 24 ժամ՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում առաքման դեպքում և 72 ժամ՝ ՀՀ մարզեր առաքման դեպքում՝ հաշվարկված Ձեր

կողմից Բաժանորդային Պայմանագրի մեկ ստորագրված օրինակը, Ձեր անձը հաստատառող փաստաթղթի և պահանջվող այլ փաստաթղթերի պատճենը ՅՈՒՔՈՄ-ին փոխանցելու նպատակով առաքողին հանձնելու և պատվիրված Ծառայության համար վճարումը կատարելու պահից:

Առաքողն իրավունք ունի մինչև պատվիրված Ապրանքը և Ծառայությունը Ձեզ հանձնելը, Ձեզնից և Երաշխավոր անձից պահանջել ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, հնարավոր շփոթություններից կամ կեղծիքներից խուսափելու համար: Եթե Ապրանքը և Ծառայությունը հանձնելիս ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը կամ դրա տվյալները չեն համապատասխանում Պատվերը ձևակերպելիս նշված փաստաթղթին կամ տվյալներին, ապա համարվում է, որ Հաճախորդը կամ Երաշխավորը ներկա չի գտնվել Պատվերի առաքման ժամանակ, և ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է հրաժարվել պայմանագրից՝ չփոխանցելով Ձեզ առաքումը: Սույն կետում սահմանված դեպքում բոլոր այն վճարումները, որոնք կատարվել են Ձեր կողմից Պատվերը ձևակերպելու ժամանակ ենթակա են վերադարձման՝ նվազեցնելով Պատվերի կատարման և առաքման հետ կապված ՅՈՒՔՈՄ-ի կրած ծախսերը:

Խնդրում ենք պատվիրված Ապրանքը և Ծառայությունը ստանալու պահին առաքողի ներկայությամբ ստուգել մատակարարված Ապրանքի և Ծառայության համապատասխանությունը Ձեր կողմից ներկայացված Պատվերին, ինչպես նաև դրա հետ ներկայացվող փաթեթը, և դժգոհություններ կամ նկատողություններ չունենալու դեպքում ստորագրել առաքողի կողմից ներկայացված Պատվերի ընդունման հայտն այն մասին, որ Դուք չունեք դժգոհություններ և որ պատվիրված Ապրանքը և Ծառայությունը Ձեր կողմից ստացվել է ամբողջությամբ և պատշաճ վիճակում:

ՅՈՒՔՈՄ-ը չի ընդունի Պատվերի և/կամ պատվիրված Ապրանքի և Ծառայության հետ կապված որևէ բողոք և/կամ առարկություն, որոնք կներկայացվեն Ձեր կողմից վերոնշյալ ընդունման հայտը ստորագրելուց հետո:

Ապրանքների կորստի կամ վնասվածքի ռիսկն անցնում է Հաճախորդին՝ Ապրանքը նրան փաստացի հանձնելու և Հաճախորդի կողմից վերոնշյալ ընդունման հայտը ստորագրելու պահից:

ՅՈՒՔՈՄ-ը պատասխանատվություն չի կրում Ձեր կողմից սխալ կամ ոչ լիարժեք հասցե նշելու կամ սահմանված ժամին և վայրում առաքման վայրում չլինելու հետևանքով Ապրանքը և Ծառայությունը չառաքելու կամ ուշ առաքելու համար:

8. Վերադարձ

Դուք կարող եք վերադարձնել Ինտերնետ Խանութից կատարված գնումները՝ ՅՈՒՔՈՄ-ի կողմից և օրենքով տվյալ Ապրանքի և Ծառայության համար սահմանված կարգով և պայմաններով: Վերադարձն իրականացվում է բացառապես ՅՈՒՔՈՄ-ի գլխավոր խանութում, որը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1, “Նորդ” բիզնես կենտրոն՝ պայմանով, որ ՅՈՒՔՈՄ-ի կողմից և օրենքով տվյալ Ապրանքի կամ Ծառայության վերադարձման համար սահմանված կարգն ու պայմանները պահպանվել են:

9. Սեփականության իրավունք

Ապրանքների, բացառությամբ շարժական կապի ամսական բաժանորդագրության ծառայության հետ հատուկ պայմաններով ձեռք բերված մոդեմների և բջջային հեռախոսների՝ նկատմամբ սեփականության իրավունքը Ձեզ է անցնում Ձեր կողմից դրանց համար ամբողջությամբ վճարելու պահից: Մոդեմների և վերոնշյալ հեռախոսների նկատմամբ սեփականության իրավունքի անցումը կարգավորվում է համապատասխան Բաժանորդային պայմանագրով: Մոդեմի համար ամբողջությամբ վճարելու դեպքում սեփականության իրավունքը Ձեզ է անցնում դրա համար ամբողջությամբ վճարելու պահից:

10. Գաղտնիություն

Դուք սույնով համաձայնում և հաստատում եք, որ Պատվերը ձևակերպելիս և այլ կերպ Ինտերնետ Խանութում Ձեր կողմից տրամադրված Ձեզ վերաբերող անձնական տեղեկությունները՝ ներառյալ առանց սահմանափակման Ձեր անունը և ազգանունը, հասցեն, տարիքը և այլն, կարող են օգտագործվել ՅՈՒՔՈՄ-ի կողմից օրենքով չարգելված եղանակներով և նպատակներով:

Ինտերնետ Խանութում Պատվեր ներկայացնելիս՝ Դուք երաշխավորում և հաստատում եք, որ Ձեր 18 տարին լրացած է և Ձեր կողմից մուտքագրված անձնական տեղեկությունները ճիշտ են և լիարժեք: Դուք կրում եք Պատվերը ձևակերպելիս ներկայացված տեղեկատվության ճշմարիտ և ստույգ լինելու ողջ պատասխանատվությունը:

Երբորդ անձանց կողմից (ներառյալ անչափաս երեխաների կողմից) Ձեր անունից Ապրանքներ և Ծառայություններ պատվիրելը և/կամ դրանց համար անկանխիկ վճարումներ իրականացնելը համարվում է կատարված Ձեր կողմից: Բացառապես Դուք եք պատասխանատվություն կրում երբորդ անձանց կողմից Ձեզ վերաբերող անձնական տեղեկատվության տրամադրման և Ձեր վճարային քարտերի օգտագործման համար:

ՅՈՒՔՈՄ-ը երաշխավորում է գործադրել իր լավագույն ջանքերը առավելագույնս ապահովելու համար իր Ինտերնետ Խանութի անվտանգությունն ու ապահովությունը և պատասխանատվություն է կրում Հաճախորդի կողմից Ինտերնետ Խանութում Պատվեր ձևակերպելու ժամանակ մուտքագրված տեղեկատվության չտարածման և գաղտնիության համար, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի և համապատասխան իրավասու մարմիններին ՅՈՒՔՈՄ-ի կողմից այդպիսի տվյալների հրապարակման անհրաժեշտության: Այնուամենայնիվ, Դուք ընդունում և համաձայնում եք, որ ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է օգտագործել Ձեր կողմից ներկայացված տեղեկատվությունը պայմանագրային պարտավարությունները կատարելու, այդ թվում՝ առաքողի կամ փոստային ծառայության միջոցով առաքման պատշաճ իրականացումն ապահովելու համար:

Ինտերնետ Խանութում տեղակայված այլ կայքերի հղումներից օգտվելիս՝ ՅՈՒՔՈՄ-ը չի երաշխավորում այդ կայքերի անվտանգությունն ու ապահովությունը: Այդ կայքեր այցելություններն իրականացվում են Ձեր կողմից Ձեր ռիսկով:

Ինտերնետ Խանութ այցելելիս՝ մեր կողմից գրանցվում է Ձեր այցի օրը, ամիսը, տարեթիվն ու ժամը:

Ինտերնետ կայքի և օգտագործողների միջև տեղեկատվության հոսքը պաշտպանված է 128 բիթ SSL բանալիով:

11. Երաշխիքային սպասարկում

Ինտերնետ Խանութում ձեռքբերված Ապրանքների համար տրամադրվում է երաշխիքային կտրոն՝ Ապրանք(ներ)ն արտադրողի կողմից սահմանված պայմաններին և/կամ ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն:

12. Այլ դրույթներ

UCOM-ը հանդիսանում է պատշաճ ձևով գրանցված ապրանքային նշան:

Ինտերնետ Խանութի բացառիկ իրավատեր է հանդիսանում ՅՈՒԲՈՄ-ը: Հաճախորդը կարող է օգտվել Ինտերնետ Խանութից միայն անձնական նպատակներով: Հաճախորդը իրավասու չէ որևէ կերպ օգտագործել, վերարտադրել, փոխանցել, տարածել և/կամ որևէ այլ կերպ պահպանել Ինտերնետ Խանութում տեղակայված տեքստը, տեսաձայնային պատկերները, զժապատկերները, նշանները, վեբ-գրաֆիկան, Ապրանքների և Ծառայությունների նկարագրությունները և ցանկացած այլ տեղեկություն կամ դրա մասը և/կամ UCOM բրենդը և/կամ դրա մասը՝ առանց ՅՈՒԲՈՄ-ի գրավոր համաձայնության: Ինտերնետ Խանութի բովանդակության ցանկացած անթույլատրելի օգտագործումը կարող է դիտարկվել օրենսդրության խախտում, և Դուք կկրեք պատասխանատվություն՝ համաձայն կիրառվող օրենսդրության:

ՅՈՒԲՈՄ-ն իրեն իրավունք է վերապահում ժամանակ առ ժամանակ փոփոխել սույն Հատուկ Պայմանների դրույթներն ու պայմանները, որոնք ուժի մեջ են մտնում դրանք ՅՈՒԲՈՄ-ի Ինտերնետ Խանութում հրապարակելու պահին կամ ինչպես կսահմանվի ՅՈՒԲՈՄ-ի կողմից: Շարունակելով օգտվել Ինտերնետ Խանութից՝ Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը այդ փոփոխություններն ընդունելու վերաբերյալ:

Ձեր կողմից ինտերնետի՝ ներառյալ վերջինիս բովանդակության օգտագործումը, իրականացվում է բացառապես Ձեր սեփական ռիսկով և պետք է համապատասխանի տեղական և միջազգային բոլոր կիրառելի օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին և նորմերին:

ՅՈՒԲՈՄ-ը կձեռնարկի ողջամիտ միջոցներ Ինտերնետ Խանութի անխափան աշխատանքը ապահովելու համար, սակայն, այնուամենայնիվ, ՅՈՒԲՈՄ-ը պատասխանատվություն չի կրում Ինտերնետ Խանութում առկա թերությունների կամ անսարքությունների հետևանքների համար:

ՅՈՒԲՈՄ-ը պատասխանատվություն չի կրում Ձեր կողմից պատվիրված Ապրանքի և Ծառայության ուշ առաքվելու կամ չառաքվելու համար, եթե այդպիսի ուշացումը կամ առաքման չկատարելը անհաղթահարելի ուժի ազդեցության կամ իր վերահսկողությունից դուրս հանգամանքների հետևանք են:

ՅՈՒԲՈՄ-ը կարող է ցանկացած ժամանակ կասեցնել կամ փոփոխել Ինտերնետ Խանութի միջոցով առաջարկվող Ապրանքները և Ծառայությունները իր բացառիկ հայեցողությամբ:

Եթե Հաճախորդը թույլ է տալիս խախտում Պատվերի ձևակերպման և/կամ պատվիրված Ապրանքի և/կամ Ծառայության ստացման և/կամ ընդունման և/կամ դրա համար վճարման հետ կապված և/կամ սույն Հատուկ Պայմանների և/կամ Բաժանորդային Պայմանագրի պայմանների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում և/կամ հրաժարվում է պայմանագրի ու դրա հետ կապված փաստաթղթերի



ստորագրումից և/կամ Պատվերը ձևակերպելիս ոչ ստույգ տեղեկություն է տրամադրում, ՅՈՒՔՈՄ-ն իրավասու է իր բացառիկ հայեցողությամբ չընդունել Հաճախորդի կողմից հետագայում ներկայացվող Պատվեր(ներ)ը և/կամ հրաժարվել արդեն ներկայացված Պատվերների իրականացումից և/կամ Հաճախորդի հետ կնքված պայմանագրից:

Եթե սույն Հատուկ Պայմանները բացի հայերենից կազմված են նաև այլ լեզվով

Հայերենի և այլ լեզվով տարբերակների միջև հակասության դեպքում գերակա է հայերեն տարբերակը: